«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

# ԿԱԽԱ ԿԱԽԻՇՎԻԼԻՆ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՈՐՊԵՍ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իր խոսքում՝ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ հոկտեմբերի 31-ին անցկացվելիք ընտրություններում «Վրացական երազանքը» աննախադեպ աջակցություն է ստանում եւ այդ աջակցությունը կոնկրետ կուսակցությանը չի վերաբերում:

Այն տնտեսապես հզոր, ժողովրդավարական, արդարացի պետության շինարարության աջակցությունն է:

Կառավարության ղեկավարի խոսքով, այդ գործընթացը պետք է շարունակվի, բարեփոխումները, որոնք անց են կացվում «Վրացական երազանքի» նախաձեռնությամբ, պետք է շարունակվեն, եւ դրա համար մշակված է կոնկրետ ծրագիր՝ կոնկրետ քայլերով:

- Ես եւ Կախան վերջին մի քանի ամսում շրջայցեցինք ողջ Վրաստանով եւ այսօր մեծամասնական պատգամավորության թեկնածուների առաջադրման վերջին օրը անց ենք կացնում Թբիլիսիում: Կարող եմ վստահությամբ ասել, որ «Վրացական երազանքը» աննախադեպ աջակցություն ունի: Մշակվել է կոնկրետ ծրագիր  եւ այն, առաջին հերթին, առնչվում է աշխատատեղերին եւ երկրի տնտեսական զարգացմանը, որը նախատեսում է մի շարք կառուցվածքային բարեփոխումներ: Բացի այդ, բնականաբար, նախատեսում է մարդու իրավունքներն ու ժողովրդավարական ինստիտուտների հզորացումը,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ «Վրացական երազանքի» ամենանշանակալի ձեռքբերումը մարդու արժանապատվության վերականգնումն է եւ այն, որ մարդը միշտ կլինի ուշադրության կենտրոնում:

Անդրադառնալով Իսանիի ընտրատարածքում պատգամավորության թեկնածուի առաջադրման հարցին, վարչապետը նշեց, որ կոնկրետ Հավլաբարը իրենից ներկայացնում է Թբիլիսիի մշակույթը, թբիլիսցի լինելը, եւ դա հիանալի օրինակ է, թե ինչպես է հնարավոր բազմերանգությունը վերածել մեր հզորության:

- Մենք այսօր Հավլաբարում ենք: Հավլաբարը Թբիլիսիի ամենակոլորիտային թաղամասերից մեկն է: Բնականաբար, Իսանին շատ ավելի մեծ է եւ, Իսանին զբոսաշրջության հետ միասին, անհամեմատ մեծ տնտեսական ներուժ ունի, սակայն Հավլաբարն իրենից ներկայացնում է Թբիլիսիի կուլտուրան, թբիլիսցի լինելը եւ հիանալի օրինակ է, թե ինչպես կարելի է բազմերանգությունը վերածել մեր հզորության,- ընդգծեց վարչապետը:

Նրա խոսքով, առաջիկա չորս տարիների համար, մշակվել են կոնկրետ ոլորտների զարգացման կոնկրետ ծրագրեր:

- Այդ ծրագրերի իրականացման համար, բնականաբար, մենք պետք է հաղթենք: Համոզված ենք մեր հաղթանակում, եւ այդ համոզմունքը մեզ վերապահում են մեր քաղաքացիները: Մենք վերափոխման կարիք չունենք, քանզի ակնհայտ է, որ սերտ համագործակցում ենք եւ նոր կապեր ենք հաստատում մեր քաղաքացիների հետ ու համոզված ենք, որ մենք միասին կհաղթենք արդարացի եւ արժանի պայքարում,- ասաց Գիորգի Գախարիան:

Ելույթ ունենալով շնորհանդեսին, մեծամասնական պատգամավորության թեկնածու Կախա Կախիշվիլին հավաստիացրեց, որ ընտրվելու դեպքում հնարավորինս կանի Իսանիի բնակիչներին հուզող հիմնախնդիրների կարգավորման, «Վրացական երազանքի»՝ երկրի զարգացմանն ուղղված ծրագրերի աջակցության համար:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԲՈԼՈՐՍ ՄԻԱՍԻՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԵՏՔ Է ՑՈՒՅՑ ՏԱՆՔ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ավելացնենք, որ ընտրություններին մասնակցելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցվել են 49 ընտրական սուբյեկտներ (47 կուսակցություն եւ 2 ընտրադաշինք):

Հոկտեմբերի 29-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացված կառավարության նիստում վարչապետը, անդրադառնալով հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին, հայտարարեց, որ դրանք երկրի համար շատ կարեւոր ընտրություններ են:

- Մեզ սպասվում է երկրում ամենակարեւոր ընտրություններից մեկը: Վրաստանի կառավարությունը, ինչպես նաեւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը արել են ամեն բան, որ մեր քաղաքացու քվեարկելու իրավունքը լիովին կատարվի, եւ այսօր մենք կարող ենք կոչ անել մեր քաղաքացիներին, որ նրանք գնան ընտրությունների: Համավարակը կանցնի, կհաղթահարենք վարակը, սակայն ժողովրդավարական ընտրություններում կատարված ընտրությունը մեր երկրի ժողովրդավարական զարգացման հիմքն է,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Գիորգի Գախարիայի խոսքով, բոլորս պետք է գիտակցենք, որ կանոնների պահպանումը միակ ճիշտ ճանապարհն է ավելի քիչ սահմանափակում գործարկելու համար, կանոնների պահպանումը միակ ճիշտ որոշումն է մեր քաղաքացիների կյանքի, առողջության պաշտպանության եւ էկոնոմիկային նվազ վնաս հասցնելու համար:

- Երկրի համար անչափ կարեւոր ընտրություններ են անցկացվելու հոկտեմբերի 31-ին: Ցանկանում եմ, ասել, որ բոլոր ընտրատեղամասերում լիարժեք պահպանված կլինեն համավարակաբանների կողմից սահմանված կանոնները, եւ մենք միասին պետք է աշխարհին ցույց տանք, թե ինչպես կարող ենք կորոնավիրուսի պայմաններում անցկացնել ժողովրդավարական ընտրություններ,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

# ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՀԱՆԳԻՍՏ ԳՆԱՑԵՔ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)



վաղվա համար, դրանք են՝ բանակը, իրավապահ մարմիններն ու առողջապահության ոլորտի ներկայացուցիչները: Իմ պարտականությունն է պաշտպանել այս կառույցներն ու անհատներին, որոնց վրա կանգնած են մեր երկրի ներկան ու ապագան»,- նշված է նախագահի ուղերձում:

Ըստ Զուրաբիշվիլու՝ այս հարձակումները ծառայում են երկրում անկայունության զգացում ստեղծելուն, վախի ու խուճապի տարածմանը եւ լարվածության առաջացմանը նախընտրական շրջանում:

«Մեր ընդհանուր պարտքն է քաջ գիտակցել, թե որոնք են մեր առջեւ ծառացած մարտահրավերները. Վրաստանը շարունակում է մնալ տարածաշրջանի ամենակայուն եւ ժողովրդավար երկիրը: Մենք պետք է պահպանենք եւ ամրապնդենք այս կարգավիճակը: Հաշվի առնելով տարածաշրջանում առկա հակամարտությունը, մեր կայունությունն է՛լ ավելի կարեւոր է ինչպես մեզ համար, այնպես էլ՝ ամբողջ տարածաշրջանի եւ մեր գործընկերների համար: Նաեւ թափանցիկ, խաղաղ եւ արդար ընտրությունները մեր ժողովրդավարական զարգացման ճանապարհին կդառնան եւս մեկ առաջ դրված քայլ: Չնայած կորոնավիրուսի մարտահրավերին, ես հավատում եմ, որ մենք կկարողանանք, անվտանգության առաջարկվող ստանդարտների լիակատար պահպանմամբ, բոլորին ցույց տալ բարձր քաղաքացիական ինքնագիտակցության եւս մեկ օրինակ: Այսպիսով, մեր ընտրություններին գնալը առկա բոլոր մարտահրավերների լավագույն պատասխանն է եւ վաղվա մեր այլընտրանք չունեցող երաշխիքը», - ասված է նախագահի ուղերձում:

# ՔԱՆԻ ՀԱՅԱԶԳԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ 10-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 31-ին Վրաստանում կանցկացվեն 10-րդ գումարման խորհրդարանի ընտրությունները: Ընտրական օրենսգրքում իրականացված փոփոխությունները, ըստ որի, 20 մանդատով ավելացել եւ 120 մանդատի է հասցվել, համամասնական ընտրակարգով, այն է՝ կուսակցական ցուցակներով բաշխվող մանդատների թիվը, իսկ ընտրատարածքների միավորմամբ մեծամասնական ընտրահամակարգով նախատեսված է միայն 30 մանդատ եւ զրոյական ընտրաշեմի սահմանումը, առանձին կուսակցությունների հնարավորություն է ընձեռվում օրենսդիր մարմնում ունենալ որոշակի թվով պատգամավորներ: Հենց այդ հանգամանքով է պայմանավորված այն փաստը, որ խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցվել է ռեկորդային թվով ընտրական սուբյեկտ՝ 47 կուսակցություն եւ 2 ընտրադաշինք:*

Բնականաբար, մեր ընթերցողներին հետաքրքրում է, թե առաջիկա ընտրություններում ընտրաշեմը հաղթահարելու իրատեսական հնարավորություններ ունեցող կուսակցությունների ու ընտրադաշինքների կողմից քանի հայազգի թեկնածու է առաջադրվել համամասնական եւ մեծամասնական ընտրահամակարգով, եւ որքանով է իրատեսական պատգամավորի կարգավիճակ ստանալու նրանց հավանականությունը:

Մեր հաշվարկներով, փոքրիշատե վարկանիշային 11 ընտրական սուբյեկտների կողմից առաջիկա ընտրություններին առաջադրվել է 27 հայազգի թեկնածու, ընդ որում, մեծամասնական ընտրակարգով (Ախալքալաքի-Նինոծմինդա ընտրատարածքում) առաջադրվել են չորսը, մնացածը ներառված են կուսակցական ցուցակներում:

Այսպիսով, հոկտեմբերի 31-ի ընտրություններին Ախալքալաքի-Նինոծմինդայի ընտրատարածքում մեծամասնական ընտրահամակարգով առաջադրվել են Սամվել Մանուկյանի («Վրացական երազանք»), Մելիք Ռաիսյանի («Միասնական ազգային շարժում»), Արսեն Կարապետյանի («Եվրոպական Վրաստան») եւ Արտաշես Հակոբյանի («Հայրենասերների ալյանս») թեկնածությունները: Նշենք, որ այդ ընտրատարածքում, որպես անկախ թեկնածու, առաջադրվել է նաեւ Վրաստանի խորհրդարանի վերջին հինգ գումարումների մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը:

Ինչ վերաբերում է համամասնական ընտրահամակարգով թեկնածուների առաջադրմանը, ապա տվյալ պարագայում էական նշանակություն ունի, թե ցուցակում որ համարի տակ է ներկայացվում թեկնածուն, այսինքն՝ որքանով այդ համարը կարող է համարվել անցումային: Այդ տեսանկյունից պատկերն ունի հետեւյալ տեսքը.

41 ընտրահամարի ներքո հանդես եկող «Վրացական երազանքը» կուսակցական ցուցակում 37-րդ համարի ներքո ներկայացրել է Սմբատ Կյուրեղյանի թեկնածությունը, 5 ընտրահամարի ներքո հանդես եկող «Միասնական ազգային շարժում»՝ Միացյալ ընդդիմության կուսակցական ցուցակում 80-րդ հորիզոնականը զբաղեցնում է Թագուհի Վարդանյանը, 2 ընտրահամարի «Եվրոպական Վրաստանի» կուսակցական ցուցակում Հարություն Ալեքսանյանը 71-րդն է, 27 ընտրահամարի «Գիորգի Վաշաձե-Շինարար ռազմավարությունը» իր կուսակցական ցուցակում ներառել է հինգ հայազգի թեկնածուի, որոնցից Շաքրո Այվազյանը 25-րդն է: Ցուցակում են նաեւ Սեդա Հակոբյանը (60), Լեռնիկ Չարբուդաղյանը (92), Մամիկոն Սահակյանը (96), Սուրիկ Ավետիսյանը (117): «Հայրենասերների ալյանսը» (ընտրահամարը՝ 8) իր ցուցակում 14 համարի ներքո գրանցել է խորհրդարանի նախկին պատգամավոր Սամվել Պետրոսյանին: 4 ընտրահամարի ներքո հանդես եկող «Դավիթ Ճիճինաձե-Տրիբունան» կուսակցական ցուցակում ներառել է ամենաշատ թվով հայազգի ութ թեկնածուի՝ Հենրիխ Մուրադյանը ցուցակում 7-րդն է, Դավիթ Ռստակյանը՝ 13-րդը, Գառնիկ Սիմոնյանը 22-րդն է, Աշոտ Մուրադյանը՝ 32-րդը: Ցուցակում են նաեւ Գրիգոլ Նալբանդյանը (68), Արկադի Սարգսյանը (83), Աստղիկ Մինասյանը (132) եւ Էլեոնորա Պոտոյանը (163): Կուսակցական ցուցակի վերջին թվերի շարքում են հանգրվանել նաեւ «Գիրչիի» (ընտրահամարը՝ 36) թեկնածու Դավիթ Իսրայելյանը (84-րդը), «Շալվա Նաթելաշվիլի-Լեյբորիստական կուսակցության» կողմից առաջադրված Գարեգին Պարունբեգովը (42), «Նինո Բուրջանաձե-Միասնական Վրաստանի» կողմից ցուցակում ներառված Էմմա Կակոսյանը (28), Վլադիմիր Ավդոյանը (71), Գարեգին Կակոսյանը (91) եւ Ալինա Տերտերովան (114):

Հետաքրքիր է, բայցեւայնպես, քանի՞ հայազգի պատգամավոր կարող ենք ունենալ 10-րդ գումարման խորհրդարանում: Բնականաբար, այդ հարցի հստակ պատասխանը կստանանք քվեարկությունից հետո, ձայների հաշվարկման արդյունքում, թեեւ արդեն այսօր, ենթադրաբար, կարելի է ասել, որ առաջիկա խորհրդարանում, ամենայն հավանականությամբ, կունենանք միայն երկու հայազգի պատգամավոր (ներկայիս գումարման խորհրդարանի 3 հայազգի պատգամավորի համեմատ): Եվս մեկ, ոչ պակաս նշանակության հանգամանք. ամենայն հավանականությամբ, նոր օրենսդիր մարմնում թբիլիսահայությունը չի ունենա եւ ոչ մի ներկայացուցիչ:

Ավելացնենք, որ Խորհրդային Վրաստանի Գերագույն խորհրդում գործում էին հայազգի 19 պատգամավորներ, ընդ որում, եւս երեքը՝ Խորհրդային Միության Գերագույն խորհրդի պատգամավորներ էին: Իսկ նորանկախ Վրաստանի պատմության մեջ 1999 թվականի 5-րդ գումարման խորհրդարանում գործում էր հայազգի վեց պատգամավոր, որոնք ներկայացնում էին Թբիլիսին, Ախալքալաքին, Նինոծմինդան եւ Ծալկան:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*

ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՐԴԻԿ

# ԱՆՑՅԱԼԻ ՈՒ ՆԵՐԿԱՅԻ ԿԱՊԸ

*Բոլոր ժամանակներում եւ բոլոր մարդկանց մոտ վարպետի աշխատանքը գնահատվում էր որպես հասարակական ձեռքբերում: Կիրառական մասնագիտությունների եւ արհեստի ներկայացուցիչները շատ անգամ էին դառնում հեքիաթների, նովելների կերպարներ, որոնք օգնում էին գլխավոր հերոսին: Նման վարպետներին վերապահվում էր նաեւ կրթական գործառույթը, չէ՞ որ նրանք երիտասարդ սերնդին էին փոխանցում տարիների ընթացքում կուտակած փորձն ու գիտելիքները: Այսպիսով, որոշակիորեն հաջորդայնությունն էր սահմանվում սերունդների միջեւ, յուրատեսակ կապ անցյալի եւ ներկայի միջեւ:*

Մեր հինավուրց քաղաքն էլ հպարտանում է կիրառական արվեստի դարերի պատմություն ունեցող ավանդույթներով, չէ՞ որ հենց նրանք՝ նկարիչները, կտավագործները, արվեստի նմուշների վերականգնողները, ոսկերիչները, կավագործները, ընդհանուր առմամբ, այս խոսքերի լայն առումով բոլոր ստեղծագործողները ստեղծում եւ ամրացնում էին Թբիլիսիի կոլորիտն ու մթնոլորտը: Այսօրվա դրությամբ, կարելի է թվել այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք ժամագործն է կամ ճենապակե նմուշների վերականգնողները արդեն հնացել են ու կորցրել իրենց նախկին նշանակությունը, սակայն, մեր այս հոդվածի հերոսներն իրենց անձնական օրինակով ապացուցում են, որ իրենց գործի իսկական վարպետները միշտ գնահատվել եւ գնահատվում են:

### ԱՆԿԱԽ ԺԱՄԱՆԱԿԻՑ ԵՎ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆԻՑ

1938 թվականին ծնված Էդուարդ Չուլիաշվիլին մանկուց զգում էր հակումն արվեստի եւ ստեղծագործության նկատմամբ: Գեղանկարչությունը սկզբում ուղղակի հոբբի էր, սակայն ժամանակի ընթացքում այն դարձավ նրա կյանքի գործը: Վերադառնալով բանակից, Էդուարդն ընդունվեց Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիա: Այստեղ նա ծանոթացավ բուհի ռեկտորի տեղակալ, նկարիչ Գիորգի Խալաթովի հետ: Հենց նա նշանակալի ազդեցություն գործեց ապագա նկարիչ-վերականգնողի ճաշակի ձեւավորման վրա: Նրանք համատեղ ուսուցման եւ աշխատանքի բազում տարիներ անցկացրին:



Էդուարդ Չուլիաշվիլի

Էդուարդ Չուլիաշվիլին հիշում է, որ նկարչական արհեստանոցը գտնվում էր Սուրբ Կարապետ եկեղեցուն հարակից: Հենց այստեղ էլ իր գործունեությունը սկսեց երիտասարդ նկարիչը: Աստիճանաբար կատարելագործելով իր ունակությունները, Էդուարդն սկսեց ուսումնասիրել նաեւ արվեստի մյուս ճյուղերը՝ խորաքանդակն ու որմնաքանդակը, սվաղն ու ճենապակու հետ աշխատանքը:

80-ական թվականները համընկան այն ժամանակահատվածի հետ, երբ մեր հերոսը ստեղծեց իր ամենահայտնի ստեղծագործությունները՝ Սայաթ-Նովայի եւ Շոթա Ռուսթավելու խորաքանդակները, Ռիխարդ Վագների կիսանդրին, Մաքսիմ Գորկու, մյուս հայտնի գործիչների պղնձյա պատկերները: Զուգահեռ, Գիորգի Խալաթովի հետ աշխատում էր Բաթումիում, վերականգնում մշակութային եւ հասարակական շենքերը, մասնավորապես՝ «Արեւելյան քաղցրավենիք» հանրախանութը:

Ներկա դրությամբ, Էդուարդ Չուլիաշվիլին զբաղված է ճենապակե նմուշների վերականգնմամբ: «Երբեմն վերականգնումից հետո, պատվիրատուն զարմանում է, չհավատալով, որ դա իր կոտրած ճենապակու ստեղծագործությունն է»,- խոստովանում է վարպետը: Այդ գործը մեծ պահանջարկ ունի, թեպետ նկարչի խոստովանությամբ, ընդհանուր առմամբ, զարդանախշերն ու կիրառական արվեստը մեծ բավականություն են պատճառում:

Էդուարդը Թբիլիսիի Մոսե Թոիձեի անվան ուսումնարանում դաստիարակել է աշակերտների մի ողջ սերունդ: Նկարիչն օրինակելի ընտանիքի հայր է, ունի երկու երեխա եւ երեք թոռ, սակայն, ցավոք, երիտասարդ սերունդը վերականգնողի մասնագիտության նկատմամբ հակված չէ: Երաժշտությունից գերադասում է իտալական օպերան եւ Մուսլիմ Մագամաեւի երգերը: Թբիլիսիի մյուս տարեց քաղաքացիների օրինակով տիրապետում է ռուսերենին, վրացերենին, հայերենին, ադրբեջաներենին, քրդերենին եւ ասորերենին:

### ԵՐԲ ԱՇԱԿԵՐՏԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է ՈՒՍՈՒՑՉԻՆ

Տաղանդավոր քեռին ունի տաղանդավոր զարմիկ: Վլադիսլավ Առաքելովը, իսկ շրջապատի համար՝ ուղղակի Սլավա, 1991 թվականից սկսեց յուրացնել ժամագործի մասնագիտությունը, պաշտոնապես աշխատում էր ժամագործ վարպետի մոտ՝ «Պիրիմզե» կենցաղային սպասարկման կոմբինատում՝ որպես աշակերտ: Մինչ այդ, նա ոչ մի առնչություն չի ունեցել ժամացույցների հետ, չէ՞ որ միջին տեխնիկական կրթությունը ստացել է Թբիլիսիի գրքի ֆաբրիկային առընթեր ուսումնարանում, յուրացնելով երկու մասնագիտություն՝ կազմարարի եւ գրաշարի: Սկզբում ժամագործի մասնագիտությունը նրան դուր չէր գալիս, չնայած նրա, որ այդ ժամանակ այն մեծ պահանջարկ էր վայելում:



Սլավա Առաքելով

Մասնագիտությունը դժվարությամբ էր ընկալվում, վարպետը դժգոհ էր Սլավայից, մինչդեռ, տարիներ անց խոստովանեց, որ իր աշակերտը գերազանցեց իրեն: Ծանր 90-ականներին երիտասարդ ժամագործը գիտակցեց, որ հարկ է հույսը դնել միայն իր վրա եւ լրիվությամբ ընդգրկվեց ժամագործի վարպետացման գործում: Հարկ էր բացել մեխանիզմների գաղտնիքը, ընկալել ժամացույցի աշխատանքը սկզբում: «Ամենակարեւորը, պատճառի հայտնաբերումն է, մնացածը հեշտությամբ է իրականացվում»,- պնդում է վարպետը:

Այսօրվա դրությամբ, Սլավայի համար ցանկացած մեխանիկական ժամացույցներում գաղտնիքներ չկան: Նրա հմտությունները տարածվում է նաեւ պատի, ձեռքի եւ մյուս ժամացույցների վրա: Իր մասնագիտության ամենահետաքրքիր փորձերից մեկը դա 18-19-րդ դարերի բացառիկ ժամացույցների վերանորոգումն էր: Առանձնակի հուսալիությամբ էին աչքի ընկնում այն ժամանակ ավստրո-հունգարական ժամացույցները, որակյալ մետաղից պատրաստված դետալները մինչ օրս էլ հիանալի աշխատում են:

Առանձնապես հաճելի է, որ ժամագործ վարպետը կապված է եղել «Վրաստան» թերթի հետ: Նրա հայրը՝ Սերգեյ Առաքելյանը, երկար տարիներ «Վրաստան» թերթում զբաղեցնում էր գյուղատնտեսության բաժնի վարիչի պաշտոնը, բազում գրքերի հեղինակ է, իսկ քույրը՝ Գայանեն, աշխատում էր մայրաքաղաքի «Վեչերնի Տբիլիսի» թերթի խմբագրությունում: Փաստորեն, մարդկանց օգտակար լինելու եւ հանրությանը ծառայելու այս ընտանիքի ավանդույթն է:

*ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՍՈՅԱՆ*




ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# TBC ԲԱՆԿԸ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՓՈԽԱՆՑԵԼ ՀԵՌԱՎԱՐ...

*Կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով, TBC բանկը սպառողներին խորհուրդ է տալիս գումարները փոխանցել հեռավար՝ մոբայլ եւ համացանց բանկի միջոցով:*




Գումարի հեռավար փոխանցումն առավելմատչելի է դարձել, ինչը զգալիորեն տնտեսում է սպառողների ժամանակը: Համացանցով կամ մոբայլ բանկի միջոցով գումարի փոխանցումը հնարավոր է միայն գումարը ստացողի անձնական, բջջային կամ հաշվեհամարի իմացության դեպքում, իսկ փոխանցման համար կպահանջվի ընդամենը մի քանի վայրկյան:

Միաժամանակ, մոբայլ բանկից օգտվելը հնարավոր է նաեւ առանց համացանցի գումարի ծախսման, ինչը լրացուցիչ հարմարավետություն է առաջացնում սպառողների համար:

Մոբայլ կամ համացանց բանկով գումարի փոխանցման համար սպառողը.

* փոխանցման ցանկից պետք է ընտրի իր համար ցանկալի փոխանցման մեթոդը,

* մտցնի հասցեատիրոջ անձնական, բջջային կա'մ հաշվեհամարը, կա'մ տրված ցուցակից ընտրի ցանկալի տարբերակը,

* նշի ցանկալի գումարը, եւ այն փոխանցի:

# ...ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐՆ ԷԼ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԵՌԱՎԱՐ

*Կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով, TBC բանկը սպառողներին խորհուրդ է տալիս կոմունալ վճարումներն իրականացնել հեռավար ալիքներով՝ մոբայլ եւ համացանց բանկի միջոցով:*

TBC մոբայլ եւ համացանց բանկի միջոցով հնարավոր է ավտոմատորեն ակտիվացնել փոխանցման գործառույթը եւ կոմունալ վճարումներն իրականացնել յուրաքանչյուր ամսվա սահմանված օրերին: Այդ ուղիով սպառողները կոմիսիոն հավելավճար չեն կատարի եւ կտնտեսեն ժամանակը:

Միաժամանակ, TBC մոբայլ եւ համացանց բանկին արդեն ավելացվել է կոմունալ վճարումների խմբավորման գործառույթը, ինչն ընձեռում է արդեն առկա կամ նոր կոմունալ վճարումների ձեւաչափերի խմբավորում եւ դրանց միավորումը ցանկալի խմբերի մեջ: Նաեւ կոմունալ վճարումը հնարավոր է իրականացնել կոճակի մեկ սեղմումով, ինչն է'լ ավելի կդյուրացնի փոխանցման իրականացումը:

TBC բանկի համար գլխավոր առաջնահերթությունը թիմի եւ սպառողների անվտանգության հոգատարությունն է: Համավարակի առաջին իսկ օրերից, բանկը սպառողների կեցությունը դյուրացնելու նպատակով, բազում սպասարկումներ անց է կացնում հեռավար աշխատակարգով: Սպասարկումների թվայնացման եւ բարելավման ուղղությամբ, TBC բանկի թիմը մշտապես աշխատում է եւ սպառողներին կառաջարկի նոր մոտեցումներ:

## ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Արցախի ժողովուրդը, հայ ժողովուրդը, ամբողջ հայությունը կռվելու է անմնացորդ, ամեն ծառի, ամեն քարի, ամեն սանտիմետրի եւ ամեն միլիմետրի համար եւ անհրաժեշտ պահին ճշգրիտ հասցված հակահարվածը հակառակորդի համար կործանարար փլուզման էֆեկտ է ունենալու:

Հենց այս պահը հասունացնելն է Արցախի պաշտպանության բանակի խնդիրը, եւ մենք պետք է ամեն ինչով աջակցենք, թեւ ու թիկունք լինենք Արցախի Հանրապետությանը, Պաշտպանության բանակին:

Վերը շարադրված խնդիրները լուծելու համար մեզ հարկավոր է ժողովրդական ուժերի բացառիկ համախմբում եւ կարգապահություն: Ռազմական դրության, առավելեւս մարտական պայմաններում պիտի գործի հրամանները անվերապահորեն եւ առանց քննարկման կատարելու տրամաբանությունը, հրամաններ չկատարողները, հրաման կատարելու կամքը սասանողները պետք է ենթարկվեն խստագույն պատժի, պատասխանատվության եւ որ կարեւոր է նաեւ հանրային արգահատանքի:

Որեւէ բան, որեւէ բան չպետք է արդարացում դառնա նրանց համար, որովհետեւ խաղասեղանին հայրենիքի ու ժողովրդի ճակատագիրն է, եւ մենք չենք կարող թույլ տալ Արցախի կորուստ կամ հայաթափում:

Սիրելի ժողովուրդ. Ես տեղյակ եմ, որ երեկվա իմ ելույթը բազմաթիվ հակասական գնահատականների տեղիք է տվել: Եվ անկեղծ ասած, տարօրինակ չթվա, ուրախ եմ դրա համար: Այդ ելույթը ուներ երկու նպատակ՝ միջազգային հանրությանը ի ցույց դնել հայկական կողմերի կառուցողականությունը եւ նաեւ հայ ժողովրդի հաստատակամությունը՝ Արցախի իրավունքների համար անմնացորդ պայքարելու տրամաբանության մեջ:

Երկու խնդիրն էլ լուծվել են են լիովին, մի փոքր անսովոր, բայց բավական արդյունավետ ձեւով: Եվ ուզում եմ բոլորիդ շնորհակալություն հայտնել ձեր հաստատակամության համար:

Մեր խնդիրը ահա, երեկվա ելույթի արդյունքում առաջացած էներգիան վեր ածել կոնկրետ գործի: Բոլորս հանուն Արցախի, ամեն ինչ հանուն Արցախի: Այս տրամաբանությունն է, որ պիտի գործի այս օրերին:

Այս օրերին պետական կառավարման ողջ համակարգն աշխատում է կազմակերպչական բացերը վերացնելու, յուրաքանչյուր օղակի գործողություններն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

Մեր հնարավորություններն անսահմանափակ չեն, բայց Արցախի պաշտպանության բանակն ունի բավարար չափով զենք եւ պոտենցիալ՝ իր առաջ դրված խնդիրները լուծելու համար: Այո, մենք աշխարհում ունենք բազմաթիվ թշնամիներ, բայց ունենք նաեւ բարեկամներ, որոնք դժվար պահին կանգնում են, կանգնած են եւ կկանգնեն մեր կողքին: Շնորհակալ հայ ժողովուրդը այդ վերաբերմունքը երբեք չի մոռանա: Երբեք չի մոռանա:

Եվ առավելեւս այս ֆոնին մեզ մնում է ամրացնել մեր կամքը, մեկտեղել մեր կամքը, սնել մեր վճռականությունն ու նվիրումը, առարկայացնել մեր որոշումը՝ պաշտպանելու մեր ժողովրդի, Արցախի հայության ինքնորոշման իրավունքը:

Այս պատերազմը մեզնից յուրաքանչյուրի համար պիտի դառնա բացարձակ ու անփոխարինելի առաջնահերթություն ու մենք կհաղթենք:

Այս պատերազմի ընթացքում էապես փոխվել է ղարաբաղյան հակամարտության ընկալումը աշխարհում: Միջազգային գլխավոր դերակատարներն այժմ ընդունում եւ բաց հայտարարում են, որ Ադրբեջանն ու Թուրքիան են ագրեսիվ կողմը: Ահաբեկիչների եւ վարձկանների՝ Ադրբեջանի կողմից կռվելն արդեն հաստատված փաստ է աշխարհում:

Սա հնարավոր է դարձել, այդ թվում, մեր ճիշտ դիվանագիտական աշխատանքի եւ հրապարակային կառուցողական շեշտադրումների արդյունքում: Դրանք ի ցույց են դնում, որ Ադրբեջանն ինչպես առաջ, այնպես էլ՝ հիմա, պատրաստ չէ փոխզիջումների, իսկ այս փաստը միջազգայնորեն լեգիտիմացնում է մինչեւ վերջ պայքարելու, հաղթանակներ կերտելու եւ հաղթանակները վայելելու հայ ժողովրդի իրավունքը:

Եկեք պայմանավորվենք, որ մենք չենք վախենալու ոչնչից: Թույլ չենք տալու ներքին եւ արտաքին որեւէ ուժի կասկած սերմանել ազատ եւ երջանիկ մեր ապագայի նկատմամբ: Մենք չենք վհատվելու նույնիսկ մեր սխալներից, վրիպումներից, անհաջողություններից:

Այս ամենը չի փոխելու վերը շարադրված մեր ռազմավարությունը, որովհետեւ՝ Մենք պարտվել ենք, պարտվել ենք քանիցս, Եվ տեսել քմծիծաղը ստի, Բայց մեր կամքը ամուր է քարից էլ, Մեր ոգին հանձնվել չգիտի:

Եվ ուրեմն՝ դու հաղթող ես հայ ժողովուրդ: Գնա եւ վերցրու քո հաղթանակը, կանգնիր եւ կերտիր քո հաղթանակը: Եվ վստահ եղիր, քո ընտրած կառավարությունը ոչ մի րոպե, ոչ մի վայրկյան չի շեղվել եւ չի շեղվելու այս հաղթանակի ճանապարհը քեզ ցույց տալու իր գործից ու պարտականությունից:

Եվ ուրեմն, կեցցե Ազատությունը, կեցցե Հայաստանի Հանրապետությունը, կեցցե Արցախի Հանրապետությունը, կեցցե Հայոց բանակը եւ կեցցեն մեր երեխաները, որ ապրելու են ազատ եւ երջանիկ Հայաստանում, ազատ եւ երջանիկ Արցախում: Շնորհակալ եմ:

# ԸՆԴՈՒՆՎԵՑ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԽՍՏԱՑՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓԱԹԵԹԸ



*Հոկտեմբերի 28-ին, Հայաստանի Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «Պաշտպանության մասին» Հայաստանի օրենքում եւ հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթը, որով ստեղծվում է աշխարհազոր եւ սահմանվում այդ եզրույթը:*

Օրենքի նախագծով սահմանվում է «աշխարհազոր» եզրույթը որպես ՀՀ-ի վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում ՀՀ զինված պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համար: Աշխարհազորը գործելու է տարածքային սկզբունքով եւ, ըստ ՀՀ վարչատարածքային բաժանման, պայմանականորեն բաղկացած է լինելու զորամիավորումներից, դրանց ենթակա բրիգադներից եւ գումարտակներից: Աշխարհազորի ընդհանուր ղեկավարումն իրականացնելու է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝ զինված ուժերի պատրաստության գլխավոր վարչությունում ձեւավորված աշխարհազորային շտաբի միջոցով:

Աշխարհազորայինի հետ կնքվելու է պայմանագիր, նրան ամրակցվելու է զենք, հատկացվելու է զինվորական համազգեստ, եւ աշխարհազորայինը նշանակվելու է համապատասխան պաշտոնի:

Օրենքի նախագիծը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունվեց միաձայն՝ 67 կողմ ձայներով:

Նույն օրը Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց կառավարության կողմից ներկայացված օրենքի նախագիծը, որով նախատեսվում է ռազմական դրության, պատերազմի ժամանակ որոշակի գործողություններ կատարելու համար սահմանել առավել խիստ պատժաչափեր:

Նախագիծն ԱԺ նիստում քվեարկությամբ ստացավ 69 կողմ ձայն:

# ԶԻՆՎՈՐԱԳՐՄԱՆ ԿՈՉ՝ ԲՈԼՈՐ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը տղամարդկանց կոչ արեց գնալ զինկոմիսարիատներ ե զինվորագրվել հայրենիքի պաշտպանության գործին, իսկ կանանց խնդրեց քաջալերել տղամարդկանց:*

«Ֆեյսբուքի» իր էջում Հայաստանի վարչապետը, մասնավորապես, նշել է.

- 24 ժամ հերթեր պետք է լինեն զինկոմիսարիատների առաջ, մարդիկ պետք է պատրաստ լինեն ՊԲ հրամանատարի ցանկացած հրաման կատարելուն: Այսօր մեր ժողովրդի ճակատագիրն է որոշվում: Չկա ճակատագրի լուծման ավելի լավ տարբերակ, քան ճակատագրի ղեկը սեփական ձեռքը վերցնելը: Որպես ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատար, պահանջում եմ, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ենթարկվի իմ կոչին, իմ որոշմանը, հրամանին. ամեն տղամարդ պետք է հենց հիմա ոտքի կանգնի ու գնա իր զինկոմիսարիատ, սա իմ հրամանն է,- ասաց Փաշինյանը:

Նիկոլ Փաշինյանը նաեւ նշեց, որ կանայք էլ կարող են ջոկատներ կազմել եւ մեկնել ռազմաճակատ, եթե ցանկություն կունենան եւ ուժ կգտնեն իրենց մեջ:

# ՀԱՐՍԱՆԻՔ՝ ՇՈՒՇԻԻ ՂԱԶԱՆՉԵՑՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Չնայած պատերազմական իրավիճակին, ի հեճուկս պատերազմի, կյանքը Արցախում կանգ չի առնում. Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում հոկտեմբերի 24-ին պսակադրություն է կայացել:*



Ամուսնացողները լրագրող Մարիամ Սարգսյանը եւ կամավոր Հովիկ Հովսեփյանն են: Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանն ընդգծեց, որ պատերազմին զուգահեռ՝ Արցախում կյանքը շարունակվում է: «Իսկ Հովիկի եւ Մարիամի՝ այսօր Շուշիի Ղազանչեցոցում տեղի ունեցած պսակադրության արարողությունն առաջին հերթին ուղերձ է՝ ուղղված ողջ քաղաքակիրթ աշխարհին՝ օր առաջ պետք է դադարեն կրակել թնդանոթները... Երջանի՛կ լինեք»:

Սեպտեմբերի 27-ից սկսած պատերազմական գործողությունների ընթացքում, հոկտեմբերի 8-ին, Ադրբեջանի Զինված ուժերը երկու անգամ հրթիռակոծել են Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցին:

## ՃԱՆԱՉԵԼ ԵՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

*Այս վերջին օրերին Արցախի Հանրապետության անկախությունը ճանաչել են ԱՄՆ Գլենդել, Ֆրանսիայի Լիմոնե, Ալֆորվիլ քաղաքները եւ Իտալիայի Միլան քաղաքի քաղաքային խորհուրդը:*

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՓՈՂԱՆՑՎՈՂ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍԵԼ ԵՆ 150 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՇԵՄԻ

*«Հայաստան» համահայկական հիմնադրամի «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» խորագրով դրամահավաք-արշավին հանգանակված գումարի չափն անցել է 150 միլիոն դոլարի շեմը: Հիմնադրամին գումար է նվիրաբերում աշխարհասփյուռ հայությունը ավելի քան 73 պետություններից: Ըստ հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանի, հանգանակության ամենամեծ բաժինը պատկանում է ԱՄՆ-ին՝ 45,3 տոկոս: Հայաստանում հանգանակվել է ընդհանուր գումարի 33,3 տոկոսը: Ծավալով երրորդը Ռուսաստանն է՝ 10,7 տոկոս. չորրորդն ու հինգերորդը՝ Ֆրանսիան (2,9 տոկոս) եւ Գերմանիան (1,0 տոկոս): Ավելացնենք, որ դրամահավաքին միացել են այնպիսի հայտնի մարդիկ, ինչպիսիք են աշխարհահռչակ հեռուստաաստղ Քիմ Քարդաշյանը եւ նրա ընտանիքը, ռոք երաժիշտ, System of a down խմբի մենակատար Սերժ Թանկյանը, աշխարհաճանաչ գործարարներ եւ քաղաքական գործիչներ:*

## ՎՐԱՍՏԱՆԻՑ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

*Դրամական փոխանցումները շարունակվում են նաեւ Վրաստանի հայաբնակ գրեթե բոլոր բնակավայրերից: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 28-ից Թբիլիսիում իր գործունեությունն է ծավալում Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում գործող «Աջակցություն Արցախին» հումանիտար գրասենյակը: Առայսօր, ուղարկվել են դեղորայք եւ բժշկական պարագաներ, հագուստ, պարենամթերք: Գրասենյակում հավաքագրվում է նաեւ մանկական հագուստ Արցախի երեխաների համար: Պարբերաբար հումանիտար խոշոր օգնություն է ուղարկվում նաեւ Սամցխե-Ջավախեթիի, Քվեմո Քարթլիի տարածաշրջաններից եւ Բաթումիից:*

CyanMagentaYellowBlack



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՆՈՅԵՄԲԵՐ



*2.11.2020 Սուրբ Ստեփանոս Հռոմի Հայրապետի, քահանաների, սարկավագների եւ մարդկանց հիշատակության օր*

*7.11.2020 Հրեշտակապետեր Գաբրիելի եւ Միքայելի եւ ողջ երկնային զորքի հիշատակության օր*

## ՖՈՒՏԲՈԼ

# ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ

***Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակել է աշխարհի ազգային հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը:***

Ըստ նոր դասակարգման, Վրաստանի հավաքականը, Բելառուսի նկատմամբ տարած հաղթանակը եւ ազգերի լիգայում Հայաստանի եւ Հյուսիսային Մակեդոնիայի հետ երկու ոչ-ոքի արդյունքներով, ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում երեք հորիզոնականով առաջադիմել եւ ներկայումս զբաղեցնում է 86-րդ հորիզոնականը:

Նշենք, որ Վրաստանի հավաքականը վերջին անգամ ամենաբարձր ցուցանիշ է գրանցել 2012 թվականին, երբ Թեմուր Քեցբաիայի թիմը, 10 անընդմեջ պարտություն չկրելու արդյունքում, զբաղեցրել էր 73-րդ տեղը:

Հայաստանի հավաքականը պահպանեց իր դիրքերը եւ նախորդի օրինակով հանգրվանել է 101-րդ հորիզոնականում:

Ինչ վերաբերում է աղյուսակի առաջատարներին, ապա առաջին հնգյակում փոփոխություններ չեն եղել: Վարկանիշային աղյուսակը գլխավորում են Բելգիան, Ֆրանսիան, Բրազիլիան, Անգլիան եւ Պորտուգալիան:

# ՖՈՒՏԲՈԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՌՄԲԱՐԿՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԳԼԽԱՎՈՐՈՒՄ Է ԼԵԳԵՆԴԱՐ ՊԵԼԵՆ

Չեմպիոնների լիգայի երկրորդ տուրում «Բարսելոնան» 2:0 հաշվով հաղթեց «Յուվենտուսին»: Երկրորդ գոլը իսպանացիների շարքերում խփեց Լիոնել Մեսսին:

Դա 33-ամյա արգենտինացու կարիերայի 721-րդ գոլն էր, որի շնորհիվ նա գերազանցեց լեգենդար գերմանացի Գերդ Մյուլլերին եւ ֆուտբոլի պատմությա մեջ պաշտոնապես գրանցված գոլերի քանակով տեղափոխվեց չորրորդ տեղը:

Մեսսիից ավելի շատ գոլ են խփել բրազիլացի Ռոմարիոն (734), պորտուգալացի Կրիշտիանու Ռոնալդուն (742) եւ բրազիլացի Պելեն (767):

## ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# ՆԱԽԿԻՆ ՁԻԱՐՇԱՎԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ



***Ինչպես արդեն հաղորդել ենք, մայրաքաղաքի նախկին ձիարշավարանի տարածքում, 36 հեկտար հողամասի վրա, «Քարթու» հիմնադրամի ֆինանսավորմամբ, կառուցվելու է Թբիլիսիի կենտրոնական զբոսայգին:***

Ըստ ներկայացված նախագծի, տարածքում կգործի բազմագործառույթ տարածք, որտեղ կլինեն բուսաբանական այգի, ճապոնական այգի, ֆրանսիական այգի, ամֆիթատրոն, շատրվան, սքեյթ այգի, սահմանային անտառային գոտի, փակ անտառային հատված, կրթական կենտրոն, Ջիպլայն, մարզական գոտի եւ սննդի գոտի: Կլինի նաեւ կենդանիների զբոսանքի տարածք, համայնապատկերային հարթակ, պարանների այգի, հետիոտնային կամուրջ, լեռնային հեծանվային արահետներ, սթրիտբոլի տարածք, ալպինիստական տարածք, իսկ զբոսայգու շրջակայքում կգործի երեք կայանատեղի:

Նախկին ձիարշավարանի տարածքը «Քարթու» միջազգային բարեգործական հիմնադրամը նվիրել է Թբիլիսիի քաղաքապետարանին: Սեփականության իրավունքի փոխանցման մասին պայմանագիրը ստորագրվել է հոկտեմբերի 5-ին:

Ըստ ընթացիկ գնահատականների՝ այդ աշխատանքները կարժենան 15-20 միլիոն դոլար: Հնարավոր է, որ այդ գումարը վերանայվի եւ նույնիսկ ավելացվի աշխատանքների ընթացքում:

# ՆՈՐ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐ ԵՎ ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՏԱՔՍԻՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

***Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, մայրաքաղաքի հասարակական տրանսպորտին ավելացել են նոր ավտոբուսներ եւ միկրոավտոբուսներ:***

Ելույթ ունենալով Թբիլիսիի կառավարության հերթական նիստում, քաղաքապետը նշեց, որ կկազմվեն նոր երթուղիներ, որոնցով կերթեւեկի հասարակական տրանսպորտը:

- Տրանսպորտային քաղաքականության շրջանակներում, հասարակական տրանսպորտով ուղեւորությունը պարզեցնելու համար, արվել են բազմաթիվ կարեւոր քայլեր, որոնք պայմանավորված են նոր ավտոբուսներ ներկրելով եւ նոր երթուղային տաքսիներ գնելով: Բացի այդ, կազմում ենք նոր երթուղիներ, որոնք կազմելուց անմիջապես հետո հատուկ շնորհանդեսի ընթացքում կներկայացնենք բնակչությանը: Այս ամենն արվում է, որպեսզի ապահովենք քաղաքացիների հարմարավետությունը,- հայտարարել է Կախա Կալաձեն:



Ինչպես նշեց քաղաքապետը նոր ավտոբուսների շնորհանդեսը կայացել է հոկտեմբերի 23-ին:

# Խ Ա Չ Բ Ա Ռ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Պարտքի դիմաց պարտատիրոջը հանձնվող իր: 3.Քաղաք Ռուսաստանում: 7.Վիետնամի դրամական միավորը: 9.Հին կավե անոթ հեղուկներ պահելու համար: 10.Թունավոր սարդ: 12.Վրացական մարզական թերթ: 13.Գետ Աբխազիայում: 14.Մարզումների բացվող գորգ: 17.Դասախոսություն բուհում: 19.Լայնատերեւ հսկա ծառ: 21.Գետ ԱՄՆ-ում: 22.Երգեցիկ թռչուն: 24.Երկրաչափական մարմին: 26.Հնդկական անկախության շարժման քաղաքական եւ հոգեւոր առաջնորդ Մահաթմա ...: 29.Փշոտ բույս: 31.Անթեւ, գորշ, մազանման փետուրներով թռչուն: 32.Սենթ Քիթս եւ Նեւիսի մայրաքաղաքը: 33.Ֆրանսիայում եւ Բելգիայում վարչատարածքային միավոր: 35.Հայոց նահապետ, Հայքի թագավորության հիմնադիր արքան մ.թ.ա.1827-1769 թվականներին՝ ... Հայկազունի: 36.Վրացի գրող ... Ասաթիանի: 37.Հունական դիցաբանության մեջ աստվածների կողմից հավերժական տանջանքների դատապարտված թագավոր: 39.Անգլիացի կին գրող, դետեկտիվի վարպետ: 40.Ա.Դյումայի եռերգության հերոսներից: 41.Ադիգեի մայրաքաղաքը: 42.Ագարիկոն, շամպինյոն:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բլուր Երուսաղեմի մերձակայքում, որտեղ խաչել են Հիսուս Քրիստոսին: 2.Վրացի ֆուտբոլիստ ...Դարասելիա: 3.Ամբողջ տարվա, մեկ տարվա: 4.Ուտելիք, կեր: 5.Գերմանական ատրճանակ: 6.Վրաց դերասան ... Բարբաքաձե: 7.Իսպանացի գեղանկարիչ: 8.Գրականության երգիծական ժանր: 11.Կաթողիկոսի կողմից այլ երկրներ ուղարկվող հանձնակատար: 15.Տիկ՝ պարկապզուկ նվագող: 16.Կաթոլիկական պատարագ: 18.Տարածաշրջան Վրաստանում: 20.Փողային երաժշտական գործիք: 21.Հիմնարկի կամ կազմակերպության անունը կրող թերթիկ: 23.Պետություն Եվրոպայում: 24.Ութ երաժիշտներից կազմված խումբ: 25.Ֆրանսիացի մաթեմատիկոս եւ ֆիզիկոս, անալիտիկ երկրաչափության հիմունքների ստեղծողը: 26.Կապիկի տեսակ: 27.Երկկճղակավոր կենդանի: 28.Գերմանական կայսրության կանցլեր Օտտո ֆոն ...: 30.Մանր դրամ, որ հավասար է ֆրանկի մեկ հարյուրերորդական մասին: 31.Հռոմեացի զորավար, եռապետ Մարկոս ...: 33.Կարճր վառելանյութ: 34.Կոճղարմատով ծաղկաբույս: 38.Ֆրանսիացի մարշալ, Նապոլեոնի զինակիցներից:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Կատմանդու: 5.Գայանե: 10.Մուրացան: 11.Արայի: 12.Ախտա: 13.Անցյալ: 14.Անուշ: 15.Սեխ: 17.Նալ: 20.Չախու: 22.Ռա: 23.Աջարիա: 25.Երկար: 27.Հակոբ: 30.Աբու: 31.Բահ: 32.Սանահին: 35.Նան: 37.Նարե: 38.Կաթ: 39.Դո: 40.Առավոտ: 43.Անասուն: 45.Անա: 47.Սա: 49.Լսել: 50.Արամազդ: 52.Արամ: 53.Նա: 54.Աննա: 56.Արենի: 57.Նեստան:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Կոմիտաս: 2.Տարի: 3.Արցախ: 4.Դոնբաս: 6.Ախալցիխե: 7.Արինա: 8.Երկ: 9.Չանախչի: 12.Աշնակ: 16.Գարուն: 18.Արոս: 19.Լիբանան: 21.Ուր: 22.Ռաբաթ: 23.Աիարոն: 24.Ջահ: 26.Կանաչ: 28.Նարոտ: 29.Սի: 33.Նավ: 34.Հետ: 36.Բաս: 39.Դամալա: 41.Ռուզան: 42.Կալաձե: 44.Առաջնա: 46.Ալմաստ: 47.Սեն: 48.Խաչեն: 51.Դալի: 55.Ար:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445